



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





5746  
5747  
5748  
5749  
5750  
5751

U 50 50 50 50

U 40 40 40 40

U 30 30 30 30

891.990  
U-50

U 20 20 20 20  
1871







667

575 Money

1. Կարմիր. Կ. ԱՅԵ-Տրու Կ. Գրիգոր  
1871
2. ԱՅԵՏրու. Կ. Տրու Կ. Գրիգոր  
Կ. Գրիգոր 1871
3. Արարչարար Կ. Ա. Արարչարար  
Կ. Գրիգոր 1863
4. Արարչարար Կ. Ա. Արարչարար  
Կ. Գրիգոր 1912.
5. Արարչարար Կ. Ա. Արարչարար  
Կ. Գրիգոր 1893.
6. Արարչարար Կ. Ա. Արարչարար  
Կ. Գրիգոր 1910.



ԽԱԶ. ԱԲՈՎԵԱՆ

# ՀԱԶԱՐՔՓԵՇԷՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Գրաֆսկայա փ. № 6

—  
1912




891.99

ԽԱԶ. ԱՅՈՎԵԱՆ

Ա. Կ.

# ՀԱԶԱՐՓԷՇԷՆ

ԵՐԳԻԾԱՆՈՒԹԻՒՆ ԷՆ, ԲԱՐԻ ԱՆՁԱՆՑ ՎՐԱՅ, ՈՐ  
ՄԵՐ ԽԱԼԽԻՆ ՓՈՒԴՆ ԵՆ ԴՆՈՒՄ:



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Գրաֆսկայա փ. № 6



1687

7547-579



## ԷՍ ՈՏԵՆԱԻՈՐԻ ԳՐԵԼՈՒ ՊԸՏՃԸՌԸ

Ո՞վ չի գիտի, որ տեղիցը վեր կենողը հէնց մեր  
խեղճ խալխի վրայ ա ոտը բարձրացնում: Գիտուն մարդը  
նա է, որ պակասութիւն տեսնելիս, սիրտը ցաւի, ձեռից  
էկածը չխնայի ու պակասաւորին ուղղի, չէ թէ վրէն  
ծիծաղի, գրով, լեզուով խայտառակ անի: Ամէն ազգ  
լաւութեան հետ վատութիւն էլ ունի՝ ինչպէս մէկ ծառ,  
որ սաղ պտղի հետ չօռտն էլ ա բերում: Եթէ անու-  
սում մարդը պակասութիւն ունենայ, չէ զարմանալու,  
այլ ներելու, ցաւն էս ա, որ մէկ մարդ համ լուսաւոր  
ըլի, համ պակասաւոր, բայց իր ծեղը թողած՝ այլոց  
գերանը քննի: Թէ Աստուած կտայ՝ մեր Ասիացիք էլ  
քիչ քիչ աչքըները բաց կանեն, էն ժամանակը չէն  
թողալ, որ ամէն հայվարայ մարդ իրանց վրայ բերան  
բաց անի: Կամենալով մեր խալխի բնութիւնը էնպէս  
իմաստուն մարդկանց բնութեան հետ մի քիչ համեմա-  
տիլ, ես մեր հազարփէշէն մէջ բերի: Կարելի ա՝ թէ  
շատ բառ, շատ խօսք քիչ մի ծանր թվի, բայց այլ  
ձևով հնար չի կար, չունքի բանն էնպէս պէտք է շինած,  
գրած, որ կարդացողի սրտովն ըլի: Շատ մութը լեզ-  
վով գրիլ՝ էնպէս եմ կարծում, թէ մեր խալխին դիր  
չի գալ:



1880 48/174 49047088 51

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.



## ՀԱԶԱՐՓԷՇԷՆ

—

Մէկ իմաստուն մարդ մեր հազարփէշի  
Անունը լսելով, ու մեր ռմբի,  
Մեր կռաքիթ յուլի, ու գինու պողի,  
Մեր սև տկճորի, ու կպրած տկի, —  
Զահլէն գնում էր, սիրտը խառնվում:  
Քթին հուփ տալիս, աչքերը խփում.  
Մեր խալխի գլխին թուր ու մուր ածում:  
Հէնց իր տեղումն էլ ոտը բարին խփում,  
Թէ վրաստանցիք մարդի հէսաբում  
Ձի պէտք է ըլին՝ որ շէն խնայում,  
Աստուծոյ սուրբ բաժակն էսպէս մուռտառում,  
Իրանց բերանն էլ հետն ապականում:  
Նոյի շարբաթը՝ գօմշի ու եզան  
Կամ իծի, ֆորթի լպրդած կաշում  
Ածում ու պահում, ու նրանց բերանն  
Է՛նպէս դազլով հուփ տալիս, կապում,  
Որ ազնիւ գինու բաղցը հոտն ու համը  
Ռմբու, տկճորի կպրած փիս հոտումն  
Եաղու ա դառնում, ու հոգին, ջանը



Իրան փորումը խեղդում, սպանում:  
Ժամի բաժակն էլ հէնց հարամ անում.  
Տէրտէրի բերանն ու իրանց փորը  
Կպրի կարասի պէս սեւացնում:

Մէկ սուպի գդալ հէնց մէջ են քցել,  
Անունն էլ մեծ մեծ՝ հազար փէշայ դրել,  
Լաւ շշի նրանով կարես խփշտել:  
Որ եախայ շունի, փէշն ո՞վ ա տվել,  
Որ էսպէս են նրան կնքել, մկրտել:  
Դեռ գլուխը բերանդ չհասած, դրած՝  
Կոթն են դէմ անում, գինով լցրած:  
Ռումբին, տիկն հօ՝ էնպէս իմանաս,  
Սէլի միջումն՝ թէ որ ռաստ գաս,  
Անգլուխ հայվան ըլի դէս ու դէն ընկնում,  
Մարդի ոտ ու գլուխ ռուսվայ անում:  
Չէ էսպէս երկրում շունը չի կենալ.  
էնպէս շան հաջաթն իրան բերնին տալ:  
Ափսոս էն հողը, ափսոս էն վազը,  
Որ էսպէս յիմար մարդքերանց ճանկը  
Գինն էլ ա կորցրել, իրան պատիւն էլ:  
Ընչի չենք էնդեղ մենք ծնունդ առել,  
Որ իստակ բօշկում, շուշէ բուդիլկում  
Աստուծոյ տված բարին պահենք ամանում:

Որդիանց որդեղ սատանի քամին  
Պտտեց ու մեր խեղճ շնորքի կարասին  
Աչքը թօզ լցրեց, քարէքար տալով՝



Գլուխը ջարդելով, ոտը կոտրելով՝  
Շրկինքը հանեց ու գետնին խփեց,  
Կավկասի սարի էս կողմը շպրտեց:  
Աչքը տրորելով՝ հէնց որ բաց արաւ,  
Գլխին, ոտին վեր հատելով տեսաւ,  
Որ մէկ քանի մի ջահէլ Վրաստանցի  
Իրար մօտ նստած մէկ ծառի տակի,  
Բաղերը քաղում, խաղողը կտրում,  
Հնձանը բերում, առագաստն ածում,  
Ոտները վեր քաշած կոխում, կխշորում.  
Հետն ուտում խաղողը, կէսը դէն բցում.  
Պանիր, խորոված՝ հէնց տաք տաք ուտում.  
Հազարփէշէն բռնած՝ իրար դէմ անում.  
Կուլէն կլկլացնում, ռումբին դարդակում,  
Ու իրանց բէֆին խաղող կամ խնձոր  
Իրար գլխի խփում, հետը խաղ ասում:  
Վեր կենում ցօփ ցօփ՝ պար գալիս, նստում.  
Իրար ճիտ անում, էլ եդ հաց ուտում,  
Երեսները վարդի պէս կարմրացրած  
Թունգերով գինին իրար գլխով խփում,  
Կամ անց կենողին կանչում, նստացնում,  
Ուտացնում, խմացնում, էլ ճամփու բցում:  
Խելքները տեղը, ուշները գլխին,  
Մէկին էլա մէկ վնաս չէր ըլում:  
«Տէ՛ր իմ և Աստուած՝ էս ի՞նչ տեղ ընկայ»,  
Գէջդանգէջ գլուխը բարձրացրեց նա,



«Ո՞ւր մեր բալն, կոնցերտն, մեր էն թէատրը  
Մեր քլուպն, մեր բիրժը, ու մեր տրաքտիրը,  
Ո՞ւր մեր մուզիկէն, մեր քաղցր սկրիպկէն,  
Մեր դամերն ու մեր կաւալերնեըը,  
Մեր կանֆէտն, մեր տանցն, ուսմի թասերը  
Շամպանսկու ուումկէն, ու բուզիլկնեըը,  
Որ ուտես, խմես՝ կոմպլիմենտ տալով  
Դամի ձեռիցը բռնած՝ պար գալով,  
Աթոռի վրայ, դիւանի միջումն  
Նստիս քո դամի կշտին. կամ սրտումն  
Քո սէրն ու շնորքը, սրտիդ հասրաթը  
Թափես, էլ եդ ձեռն առնիս քո ձեռը,  
էլ եդ պտտիս, մինչև գլուխդ ուռչի,  
Ու շշմած ընկնիս դամիդ առաջի,  
Նա էլ աղլխով խփի երեսիդ,  
Կամ իր սուրբ ձեռովն ջուր շաղ տայ դօշիդ»:

«էս ի՞նչ տեղ ընկայ, էս ի՞նչ ջհանդամ.  
Որ կողմն էլ ընկնիմ, էլ եդ սախտ մնամ:  
Ո՛չ լեզու գիտեն, ո՛չ ինձ հասկանան.  
Սիրտս պատուում ա, ո՛ւմ ասեմ իմ դարդն:  
Հայ ասես, Վրացի գլխիս մօտ էլած,  
Քէֆընեըը բօք, գլխընեըն լցրած.

Բօն ժուր <sup>1)</sup> եմ ասում, «քէֆ արա՛» լսում.

Գուտն տաղ <sup>2)</sup> կանչում, «տօ խմի» լսում:

Զղրաստի գոռալով ես բերանս ճոթում,

<sup>1)</sup> <sup>2)</sup> Գազդ. և գերմ. կնշանակէ բարի օր:



Ուռայ են կանչում, գինին փորս ածում.  
Բեսթի եմ ասում, ես «դօսթ» եմ լսում.  
Պօսկլեատիյ գոռում, «ալլահ վէրդի» լսում.  
Կանալեայ ասում, «եաղշի օլ» լսում:  
Մազերս եմ ուզում պոկեմ, պռճոկեմ.  
Դուէլ եմ ուզում կանչեմ, սպանեմ.  
Ոտս եմ բարձրացնում, քացի տամ ջարդեմ.  
Մէկ մեծ պարկ ուշունց, ու հազար անէծք  
Նրանց գլխին ածեմ, ու դուս գամ փախչեմ,  
Շատ ուշունց տալով բերանս հոտեցաւ,  
Լեզվիս ու փորիս բոլոր նիւթն հատաւ.  
Էս տաւարները, հաստագլխները  
Բերնիս շէն նայում, իմ ասածները  
Անկաջվեր անում, թէ՞ հասկանում էլ,  
Էլի թե՛ցդ քաշում, նստացնում.  
Հազարփէշէն ու կուլէն դէմ անում:  
Հէնց գիտես՝ սրանք մարդի որդի շէն,  
Որ էսքան խօսքին տանին, համբերեն:  
Սատանին ասես, քեզ դժոխքը կտանի.  
Դուէլ կկանչի, արինդ կթափի:  
Սրանց կոպիտ գլխումն դեռ մեր մարիֆաթն.  
Հէշ տեղ չի արել, կամ ըթին դիպել.  
Որ դատած ապրանքդ, մալդ ու դօլվաթդ,  
Պահես սև օրին, թէ ջուր ուզեն էլ,  
Ընչանք փողը շառնիս, նրան տուն շթողաս.  
Դռանդ ընկած ըլին, քացով խփես, գնաս:



էս ի՞նչ ախմախ են, որ իրանց հացը  
Ում որ տեսնում են, ածում առաջը:  
Փող պտի շինած ու ծոցը դրած.  
Լաւ հաքած, մաշած ու կառէթ լծած,  
Բալ տալ, բալ գնալ, իր փառքը ցոյց տալ,  
Մօտովդ անցնելիս, երեսդ շուռ տված.  
Ինչ ունիս, գլխիդ, ոտիդ խարջ արած.  
Լաւ տեղ ու լաւ շին, լաւ նշան ճարած.  
Ամէնի աչքն էլ վրէդ մայիլ թողած,  
Բուլվարն մտնելիս՝ հազար աչքի մէջ  
Կամ կրակ վառած, կամ սուր, փուշ ցցած»:  
«Սրանք հօ մարդիկ չեն, իրանց շապիկն էլ,  
Որ ուզես, կտան, էնքան խղճացել:  
Անտես, անճանաչ տուն էլ որ մտնիս,  
Սուփրի գլխին դու կնստիս, կբազմիս:  
Մէկ աչքդ աչքին, երեսդ երեսին  
Առնելիս՝ կուզեն՝ տան իրանց հոգին:  
Մէկին մէկ դարդակ դուն բարով տալիս,  
Ուզում ա ջանը հանի, քեզ բաշխի:  
Ձէ. սրանց մտքումն մէկ Ֆիքր որ չլի,  
Քեզանից մէկ բան, մէկ ումուդ չլի,  
Մէկ խնդիր, արգայ թէ որ չունենան,  
էս տեսակ պատիւ քեզ ի՞նչպէս կտան:  
Ասածն էլ չանես, խնդիրը չկատարես,  
էլի ոսկիքը, գլխով շաքարներ  
Սունդուկով շայր, շալ շալ մանէթներ



Ելի ջէբդ ածես, նրանց հոգին հանես,  
Թէ խօսք էլ ասեն, քամակդ դէմ անես.  
Ասիացի մարդն զակօն ինչ գիտի,  
Որ քեզ հետ խօսայ կամ համարձակվի:  
Գլխին տո՛ւր, զրադին կանգնի՛ր, քէֆ արա՛,  
Ջէբդ լցրու, քո երկիր գնա՛.  
Ո՛վ ա հարցնում, կամ գլուխդ կտրում.  
Անլեզու հայվանն տուն թողում, պահում:  
Շատ էլ որ անեն, մէկ պօղսույ կտան,  
Պրծար, գլուխդ ա՛ռ, ու գնա՛ քո բան:  
«Որ դռնով անցնիս, քեզ տուն են կանչում,  
Հարսանիք, դօնադ առանց քեզ չանում:  
Սազ ու սազանդար կանչում, մխիթարում.  
Սրանք ինչ գիտեն զակօն, էտիքէթն,  
Գտակները գլխին, բերնին շիբխի փէտն  
Ձեռդ բռնում են, վերևը նստացնում,  
Զազդը՛վիայ, ուռա՛յ հէնց կանչում, գողում.  
Ալլահվէրդի, եա եախշի օլ բղաւում:  
Տօ ձեր ալլահն էլ, վէրդի մէրդին էլ  
Ձեր զդրավին էլ, ուռայ մուռէն էլ  
Ձեր գլխովը դիպչի, ձեր աչքը հանի:  
Ախր տրաքեցի, էնքան լագեցի,  
Ախր ճաքեցի, էնքան լափեցի:  
Գլուխըս վրէս էլ դուզ չի կանգնում.  
Աչքերս սևանում, խելքս ցնորվում:  
Տօ մեռայ, թողէ՛ք՝ այ դուք մաշէնիկ.



Ինձ հօ չէ՛ք սպանիլ՝ ախ դուք եաբեղնիկ.  
 Ձեր տունն էլ քանդվի, ռումբին էլ տրաքի.  
 Ձեր հազարփէշէն, կուլէն ո՛չ ըլի:  
 Իմը ինձ հասաւ, թողէ՛ք՝ մէկ դուս գնամ.  
 Մի քիչ շունչ սունիմ, իմ գլուխը լամ:  
     Խեղճ վրաստանցիք մնացին սառած,  
 Իրանց ղօնաղի ահվալը տեսած.  
 Փորը մէկ կողմից, բերանը բաց էլած.  
 Ուզեցան քուն դնեն, նրա մօտը նստած.  
 Կամ իր Ֆաթերը մթնով հասցնեն,  
 Որ այլք չտեսնին, վրէն չծիծաղեն.  
 Նա էլ չամաչի, իր երկիրը չփախչի.  
 Կամ իրանց մէկ շար խաթի մէջ շքցի:  
     Տեղից վեր թռաւ գիծ կովի նման,  
 Ջարդեց շարքեասէն, կուլէն ու ամանն.  
 Ուզեցաւ մէկ քար, կամ մէկ փէղ առնի,  
 Նրանց գլխին քցի, նրանց ջանը հանի.  
 Ինքը շորս ոտով գլխի վրայ շօք, շօք,  
 Մաղալաղ տվեց ու ցօփ, ցօփ, լօք, լօք,  
 Շիրի կարասը ընկաւ նա կուփ, կուփ,  
 Բերանն էր բանում, աչքն էր մնում խուփ,  
 Աչքերն էր ճմռում, քցում բերնի թուրն:  
 Գինին հարամվեց, բայց մեր խեղճ Հայերն  
 Գինուց ձեռք վերցրին, ղօնաղի շորերն  
 Ուզում էին, որ հանեն, շորացնեն,  
 Բարձ, եօրղան, դօշակ, քցեն, պարկացնեն.



Մեր փիլիսոփէն, մարիֆատի պարկն  
Գուռը վեր քաշեց, որ նրանց ոտի տակն  
Մնի, սպանի, իր ջիգըը հանի,  
Մէկ էլ որ ջանին գօռ տվեց, բիրադի  
Ջուխտ ոտով ընկաւ սուրբ ռմբու գլխին.  
Ռումբին կատաղեց, ռեխը բաց արեց,  
Մեր ուսեալ գժին խտիտը քաշեց,  
Աչք, ունքեր, երես դեղ դրեց, կպրեց:  
Մէկ էլ որ ուզեց, բերանը բաց անի,  
Որ իր շկօլի աղօթքն եղ ասի,  
Ռումբին շկօլի դեռ ձէն շլսած,  
Ո՛չ վարպետ տեսած, մարիֆատ շառած,  
Որ իմանայ՝ թէ կօմպլիմէնտն ի՞նչ ա,  
Կամ էտիքէթը ի՞նչ փթած կօմշի ա,  
էնպէս մէկ գոռաց, բօղազը ճոթուեց,  
Ու ջուխտ ոտով նրան էնպէս քացի տվեց,  
Որ հէնց ուզում էր գլուխը հանի,  
Քամակի վրայ էլ եղ շուռ էկաւ,  
Մաղալաղ տվեց, գունդ ու կծիկ էլաւ,  
Ու փռուալով, աղօթք ասելով,  
Հային օրհնելով, վրացուն գովելով,  
Ընկաւ օջաղի, բեաբաբի վրայ,  
Շուռ տվեց, ջարդեց պղինձ ու թաւայ,  
Կրակն մէկ կողմից, շամփուրն միւս դհից  
Բարկացած, տօլմի պղնձի դրաղից  
Բռնեցին գոռալով, իրանց գլուխը լալով,



Էնպէս մեր խղճի կարթացած բերանն,  
Ու զշի լեզուն, սիպտակ երեսը,  
Նազուք ձեռները, բարակ ծնկները  
Բերան քցեցին, ատամի տակին  
Հուփ տվին, ծամեցին, միսը թռցրին,  
Որ կատու դառած՝ ձեռները քցեց՝  
Որ իրան հանեն, աղաչանք արեց:

Դուս էկաւ՝ թէ չէ՝ էլ ասլան դառաւ,  
Քարերով ընկաւ, բօլերով ընկաւ.  
Որ նրանց կերածն քլթներիցն հանի,  
Նրանց բոլոր տանի, պօլիցէն ածի:  
Սատանի աչքը պէտք է բօռանար,  
Որ էսպէս վախտին բանի մէջ չգար:  
Քօռաղաղինայ՝ մէկ պղնձով նաֆթ  
Բերել էին՝ որ տկերը կալնին,  
Որ գինին շտանին:

Խելօք գինէգիժն հէնց ֆռսանդ ճարեց,  
Մէկ էլ իր ձեռը որ շի բարձրացրեց,  
Ճղղաց, թրպրտաց, նաֆթի պղինձն ընկաւ,  
Դու լաւ կիմանաս, ինչ գլխին էկաւ:  
Նաֆթը դաղած էր ու կրակի վրայ.  
Վայ նրա օթին, դուշմանիդ չգայ:  
Գլխի վրայ էր նա մէջը ընկել.

Ոտները դարիդուս ցցվել, մնացել:

Ձէնը կտրվել, շունչը պապանձվել:

Էլի մեր նաչար բարի վրաստանցիք



Վտիցը բռնեցին, նրան դուս քաշեցին,  
Ջուրը բացեցին, երեսը լուացին,  
Գնացին դեղ բերեն, կամ հէքիմ կանչեն,  
Էլի իմաստունն՝ որ ափալթափալ  
Հէնց մէկ շունչ քաշեց ու թիչ դինջացաւ,  
Թաքրար քար, փէտի նա վրայ պրծաւ:  
Էրվաժ, խորովվաժ ձեռներովն սկսեց,  
Որ մեր անաստուած նաֆթի պղինձը  
Նրանց զլխին բցի, նրանց փոթոթի:  
Սատանին նալաթ՝ պղինձն իր զլխին  
Շուռ էկաւ, էրեց նրան, զարկեց գետնին:  
Ձեռը շորս կողմը քօռըքօռ ածելիս,  
Քարերը պոկելիս, դօշին խփելիս՝  
Որդիանց որդեղ մէկ հազարփէշայ  
Նրա ձեռն ընկաւ քօռադադինայ:  
Հէնց իմացաւ՝ թէ էս դաբանչայ ա,  
Դօշին որ շղրեց՝ Աստուած կանչելով,  
Իսկոյն մի քանի հոգի ձէն տալով՝  
Մէկը սապօժնիկ, միւսը կալբասնիկ,  
Միւսը պօրտնոյ, մէկը տրաքտիւրշիկ՝  
Քօթուկ-ոտներով, ջվալ բերանով,  
Տէփուր երեսով, ճարխալ-թշերով,  
Ջուռնայ-բթերով, բհիր-ձեռներով,  
Տրուբկայ քաշելով ու բօշկա-փորով,  
Ղօբի ու շափար, դռները քանդելով,  
Վրայ թափեցին, ոխները ցրվելով,



Գինու, արաղի, կ'վրի փիս հոտով  
Ուզում էին՝ որ հէնց սոված փորով  
Մեր խեղճ վրաստանցոցն բիրաղի ուտեն,  
Իրանց հունարը նրանց վրայ փորձեն,  
Ամա մեր խալխի մուշտու հունարը  
Դեռ չէին տեսել, որ իրանց ձեռը  
Թօխամախ- գլխներով բալի տակ չքցեն:  
Հէնց պլդուխները լցրին ուշունցով,  
Դուռակ, ու շելմայ՝ էկան ձէն տալով,  
Մեր Հայի մուշտին, վրացու քացին  
էնպէս թունդ դիպաւ նրանց գլխին, փորին,  
Որ ամէն մէկը հազար տեղ շօքեց  
Թխկաց, զրխկաց, հազաց ու պարկեց.  
Մէկ կողմը շապկէն, միւսը տրուբկէն  
Ցխումն թաւալ տվին, տէրները կորցրին:  
Նրանք էլ իրանց տլոտ ֆրակով,  
Հազար տեղ ցխին պաշ արին սիրով.  
Ուզեցան մէկ էլ քօռ հաւի նման  
Գլուխ վերցընեն, իրանց գլուխը լան.  
Բաղմանչիք կէտով, թիով, դագանակով  
վրայ հասան՝ որ նրանց ցխոտ բահերով  
Գլխները ջարդեն, նահատակ անեն.  
Բայց մեր խալխի սիրտն կակող ըլելով,  
Նրանց եղ կանգնացրին, վրայ թափեցին,  
Փիլիսոփէքին ցխից հանեցին.  
Գլխները սրբեցին, երեսները լուացին.



էլ ձէն տալ նրանք հէշ կարո՞ղ էին:

Ուս ու փուս իրանց զատերը կիտեցին,

Ուզում էին՝ որ քաշվին, պրծնին.

Բայց մեր սուփրի համն՝ դուշն էլ անց կենայ,

Որ չտեսնի, մեր սրտումն շատ դարդ կմնայ:

Մեր դօշաղ տղէրքն իրանց դուշմանին

Կանչեցին, սուփրի գլխին նստացրին.

Իրանք քէֆ արին, նրանց քէֆ շհանց տվին:

Տէնց հազարփէշէն որ մէջ չըբերին,

Մատաղ գառի պէս մեր Եւրոպացին

Առաւ՝ մուրազով պաշեց, դրեց բերնին:

«Սուրբ հազարփէշայ՝ զօրութիւնդ շատ ա.

Մեր բալն, մեր կոնցերտն, մեր տանցն ո՞չինչ ա:

Ով կախէթու սուրբ բաժակի համն,

Ռմբու, տկճորի ու կպրի ջուքամն

Ձի տեսել, նա հէշ մարդի հէսաբում

Ձի ըլիլ բնաւ բոլոր աշխարքումն:

Քնելիս, զարթնելիս՝ թէ ժամ գնալիս,

Ընչանք քո համը շառնենք, շխմենք,

Թո՞ղ Աստուծոյ մօտը սևերես մտնինք:

Մէկ միրկիտանի դուքան տեսնելիս,

Մէկ պուճախում կպրի հոտը առնելիս՝

Փող էլ չունենանք, գլխներս ծախենք,

Գլուխն մերը չըլի, սերթուկն գրաւ դնենք,

Մտնինք քո տաճարն, ռումբիդ համբուրենք.

Շատ անգամ մօտիդ վեր ընկնինք, բնինք:

25-47. 57



Թող վրաստանցին բեզ կպրում ածի,  
Քեզ անլվայ ոտով կոխի, կխշորի.  
Քեզ ճաշակելիս՝ էլ գլուխը ձեռին  
Ման գայ, շշմի բո բաղցը հոտով.  
Հինգ թունդի խմի, բեղերն սրելով՝  
էլի դուս գայ լուրջ ու պարծենալով  
Հազար տեղ ասի. «էս օր խմեցի  
Հինգ թունդի, կուզեմ բայց խմեմ էլի.  
Ինձ համար գինին, Քռի ջուրն մէկ ա,  
Ինձ համար որ նա կրակ էլ դառնայ,  
էլի չի կարող մէկ խէր, կամ շառ տայ.  
Հազար էլ խմեմ, էլի կորցնիլ չեմ  
Իմ ուշս ու խելքս, իմ բանս կանեմ:  
էլի տկճորը մօտիս կունենամ,  
ՔէՔ կանեմ ու իմ հոգսը կը հոգամ»:


«Ձէ սուրբ ռումբի՝ սուրբ հազարփէշայ,  
Ձեր համա առնողը պէտք է բնած մնայ:  
Հազար օր բարձից գլուխը շվերցնի,  
Ձեր էշխին, բէՔին նա մատաղ ըլի.  
Ցխումն էլ ընկնի, ձնումն էլ թաղվի,  
էլի ձեր էշխը, ձեր սէրն ու հրաշքը  
Միտքը բերելիս՝ երազով ընկնի,  
Գնայ երկինքը, երկիրը եղ գայ:  
Ձեր արևի ձէնն ածի ու խնդայ:  
Օրթում էլ ուտի, ձեր գլխովն երդվի,  
Դեռ հաց չկերած, ձեր անուանն յիշի,



Չեզ փորը ածի, որ բանն յաջողի»:  
Էս ա, որ հմիկ մեր ամէն բանը  
Փոխվել ա, ամա մեր գինու ջանը  
Դեռ կպրում մնում, զօռը բանացնում.  
Որ հազարփէշայ, ու տկճոր, կուլայ  
Էլի մնացել են էնպէս միշտ թագայ.  
Ով ասես՝ մեզ միշտ հարբայ է գալիս,  
Մեր ռմբու ձէնը հէնց իմանալիս,  
Բարեկամ դառնում, մեզ ախպէր ըլում,  
Մեզ պատիւ տալիս, մեզ քօմակ անում:  
Ասացէք տղէրք՝ դուք ալլահվէրդի,  
Եաղշի՛ օլ, ուռայ, կամ գղրավի.  
Բօն ժուրն, գուտն տաղն բանի պէտքը չի.  
Աստուած, օր, արև ռմբու շինողին,  
Աստուած մեր հազարփէշի սարքողին  
Մինը հազար անի, գերեզմանն օրհնի:  
Նրա մեռած հոգին միշտ լուսաւորի.  
Ու մեզ էլ պահի, որ մեր կախէթու  
Բաժակի դադրը միշտ իմանանք, ու  
Միշտ հազար բերնով, ու հազար ձեռով  
Հազարփէշէն բռնած՝ հազար օր ասենք.  
Աստուած կախէթը շէն պահի, հաստատ.  
Նա է մեզ տալիս ուրախ սիրտ, զվաթ:  
Աստուած նրա բունեաթն միշտ հազար տարի  
Ղայիմ, դադրմի անպակաս անի.  
Հազար ձեռով միշտ հազար փորձանքից,



Հազար շառից, շուռից մեզ ազատ պահի:  
Տղէրք՝ ձեր մինը միշտ հազար ըլի.  
Ուտէնք, քէֆ անենք, հօ հազար տարի  
Մենք շենք ապրելու էս փուշ աշխարքումն.  
Սաղ ըլիք, ուրախ՝ հաւասարական.  
Մեր մեռած ու սաղ ըմբռով կշտանան:













վաճառքը Թիֆլիսի հայ գրախանութներու




100 հատ ցանկացողին ուղարկում ենք մեր ծախ-  
քով, ստանալով կանխիկ 6 թուր. 50 կ.

Դիմել՝—Тифлисъ, Б.-Ванкская. № 30,

Екатеринѣ Конст. Абовьянѣ.





ԿԱՐՄԱՏՈՒՆ Ա. ԲԱԴԴԱՆՈՅՇ

ATELIER DE RELIEUR  
A. PAGHTANOUCHE

Тшакмакджилар бейук yeni han 5-6

Заведение А. Пагтануш  
Тшакмакджилар бейук yeni han 5-6



5746  
5747  
5748  
5749  
5750  
5751

2013



